




**Արցախի
Հանրապետությունը
ինքնիշխան,
ժողովրդավարական,
իրավական,
սոցիալական
դեմոկրատիայի
դեմոստրացիա է:**

ԱՐՑԱՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱՆՈՒԹՅՈՒՆ, Հողված 1,
1-ին կետ

ՈՒՐԲԱԹ, 24 ՓԵՏՐՎԱՐԻ 2017Թ.
№ 06 (424)

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am



**Սահմանադրական
հանրաքվեից
հետո՝ Արցախի
Հանրապետություն,
իսկ պետության
գլուխն ու գործադիր
իշխանության ղեկավարը
հանրապետության
Նախագահն է**

Քննարկվեց մարզի 2017-25թթ. զարգացման նազմավարությունը

Փետրվարի 20-ին մարզկենտրոնում տեղի ունեցավ հանրային խորհրդարանի Սյունիքի մարզի 2017-25թթ. զարգացման նազմավարության վերաբերյալ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, տնտեսվարողների, հասարակական կազմակերպությունների, փորձագետների, կրթական հաստատությունների ներկայացուցիչների և շահագրգիռ այլ անձանց մասնակցությամբ:

Սյունիքի փոխմարզպետ Վարդան Դավթյանը ողջույնի խոսքում նշեց, որ փաստաթուղթն անցել է քննարկման մի քանի փուլով, լրանվել է, և ներկայումս իրականացվում են վերջնական քննարկումները: Նա տեղեկացրեց, որ նազմավարության մշակման աշխատանքների համակարգման գործում զգալի է եղել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, ԵՄ փորձագետների դերը, ինչպես նաև մարզում գործունեություն ծավալող մի շարք միջազգային և հասարակական կազմակերպությունների աջակցությունը, որոնք նաև իրենց ներդրումը կունենան առաջիկա տարիներին մարզի զարգացման գործում:

Ինչպես նշվեց խորհրդատվության ընթացքում, զարգացման այս նազմավարությունը համահունչ է ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման նազմավարության և ՀՀ 2016-2025թթ. տարածքային զարգացման նազմավարության հիմնական գերակայություններին, ինչը կնպաստի նաև համայնքներում առկա հիմնախնդիրների լուծմանը:

Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Էդգար Մարտիրոսյանը մանրամասն ներկայացրեց մարզի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու առկա սպառնալիքները, նրա զարգացման նազմավարական նպատակներն ու հիմնական գերակայությունները: Ամփոփելով ասվածը՝ նա նշեց, որ տարածքային զարգացումը դեկավարվում է նազմավարական տեսլականով, որի համաձայն՝ Սյունիքի մարզը կլինի արագ աճող, մրցունակ և դիվերսիֆիկացված արդյունաբերությամբ, զարգացած գյուղատնտեսությամբ, զբոսաշրջային համաչափ զարգացած տարածքներով, գործազրկության և արտագաղթի ցածր տեմպեր ունեցող մարզ: Ե.Մարտիրոսյանը ներկայացրեց նաև իրականացվելիք որոշ ծրագրեր, որոնցից են՝ Մեղրու ազատ տնտեսական գոտու ստեղծում (Ազարակ քաղաքում 15 հա տարածքի վրա ազատ տնտեսական գոտու ստեղծում, 32 մլն դոլար), Կապանի օդանավակայանի վերագործարկում (1,5 մլն եվրո), Մեղրի համայնքում առևտրային և ժամանցային համալիր կենտրոնի ստեղծում (10 մլն դոլար), Հյուսիս-հարավ ճանապարհի կառուցում (1,2-1,5 մլրդ եվրո), գյուղատնտեսական տեխնիկայի վարձակալության և սպասարկման կենտրոնների հիմնադրում (գտնվում է մշակման փուլում, բայց նախատեսվում է Սյունիքի մարզի Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններում հիմնել գերմանական կամ հոլանդական տեխնիկայի վարձակալական և սպասարկման կենտրոններ, 1,5 մլրդ դրամ), ջերմոցային բանջարեղենային տնտեսության զարգացում (գտնվում է

Փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած հանրաքվեն անկախ Արցախի երրորդ համապետական նշանակության հանրաքվե էր, որ վճռելու էր երկրի կառավարման ձևը. մնալ կիսանախագահական, թե՛ կենտրոնացնել իշխանությունը Նախագահի ձեռքում: Հանրաքվեն Նաև Նպատակ ուներ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը վերանվանել Արցախի Հանրապետություն: Հանրաքվեի անցկացման օրը Նաև խորհուրդ ուներ. 29 փարի առաջ՝ 1988-ի փետրվարի 20-ին, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզ-խորհուրդն արտահերթ նախաջրջան հրավիրեց և որոշում կայացրեց Արցախն Ադրբեջանի կազմից դուրս բերելու և

Հայաստանին միացնելու համար: Այդպես դրվեց Արցախի ազատագրական պայքարի հիմնաքարը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովից հանրաքվեի ընթացքը լուսաբանելու համար հրավեր էր ուղարկվել Նաև «Սյունյաց երկիր» թերթի խմբագրությանը:

Մամուլի ասուլիս
Առաջին միջոցառմանը, որ մասնակցեցին, հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի մամուլի կենտրոնում անցկացված ասուլիսն էր: Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի նախագահ Սրբուհի Արզու-

մանյանը, ողջունելով միջազգային դիտորդներին և լրագրողներին, մասնավորապես նշեց, որ սա 26 տարվա անկախություն ձեռք բերած հանրապետության թվով երրորդ համապետական նշանակության հանրաքվե է, որ անցկացվում է «Հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքի և 2015թ. հունվարի 1-ին գործողության մեջ դրված Արցախի Հանրապետության նոր ընտրական օրենսգրքի հիման վրա: Անդրադառնալով հանրաքվեին նախորդած կազմակերպական աշխատանքներին՝ բանախոսը հրապարակեց թվական տվյալներ. հանրաքվեին քվեարկելու իրավունք կունենա 103818 քաղաքացի, զգալիորեն ավելի, քան 2015թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակը:

էջ 4

«Անում ենք և անելու ենք հնարավոր ամեն բան, որ հանրության վստահությունն արդարանա և ամրապնդվի»

«Առավուտ»-ը գրուցել է Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի հետ

— Պարոն Հակոբյան, արդեն լրացել է Ձեր պաշտոնավարման 100 օրը: Համարվում է, որ սա մի շրջան է, երբ նոր պաշտոնյան լիարժեք տիրապետում է իր առջեւ դրված խնդիրներին և ունի դրանց լուծման ծրագրեր: Դուք ի՞նչ խնդիրներ եք արձանագրել և ի՞նչ լուծումներ եք պատկերացնում:
— Ճիշտ նկատեցիք, ես ընդամենը 100 օր եմ մարզպետի պաշտոնում, բայց պետք է ասեմ, որ մարզի խնդիրներին վաղուց եմ ծանոթ: Ձանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատում աշխատելիս ես ոչ միայն մոտիկից

ծանոթ եմ եղել Սյունիքի մարզի խնդիրներին, այլևս այդ ժամանակվանից մինչ օրս իմ գործընկերների հետ համատեղ մարզի և առանձին համայնքների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը միտված բազմաթիվ ծրագրեր եմ առաջ քաշել և իրականացրել: Այնպես որ, մարզպետի պաշտոնում նշանակվելուց հետո մարզի առանցքային խնդիրներին ծանոթանալն առանձնակի մեծ ջանքեր չպահանջեց:
— Այս փուլում ի՞նչ բարեփոխումներ են իրականացվում մարզում: Ի՞նչ առաջնահերթ քայլեր եք պլանավորում:
— Ծրագրերը բազմաթիվ են, իսկ բարեփոխումների վեկտորը մեկն է՝ հասնել նրան, որ պետական և համայնքային միջոցներն արդյունավետ տնօրինվեն, որպեսզի հանրային, սոցիալական ծառայությունները հասա-



Նելի լինեն մարզի բնակչությանը: Ինչ վերաբերում է իրականացված բարեփոխումներին,

էջ 3

էջ 2



Քննարկվեց մարզի 2017-25թթ. զարգացման ռազմավարությունը

Մշակման փուլում, նախատեսվում է հիմնել 2-3 հա ջերմոցային տնտեսություն բանջարեղեն (լուիկ, պղպեղ, վարունգ) աճեցնելու նպատակով: Այն պետք է ունենա սեփական ենթակառուցվածք՝ սառնարան, ջրային տարողություններ եւ աշխատանքային շինություններ: Արժեքը՝ 4-5,4 մլն եվրո, ջերմոցային ղեկորատիվ տնտեսության զարգացում (գտնվում է մշակման փուլում, նախատեսվում է 1-1,5 հա ջերմոցային տնտեսություն՝ վարդեր աճեցնելու նպատակով: Օգտագործելով ամենաարդիական մեթոդները նախատեսվում է արտադրել բարձրորակ վարդեր՝ արտահանման նպատակով: Անհրաժեշտ է ստեղծել նաեւ սեփական ենթակառուցվածք՝ սառնարան, ջրային տարողություններ,

րավորությունների (պլաստիկ թափոններից շինարարական նյութերի ստացում, 750 հազ. եվրո), Գորիս, Մեղրի, Տաթև, Տեղ, Գորայք համայնքների տեղական տնտեսության եւ ենթակառուցվածքների զարգացում (1,6 մլրդ դրամ), Ջանգեզուր կենտրոնային համալիրի զարգացում (կենսաբազմազանության պահպանում, հարակից համայնքների սոցիալ-տնտեսական զարգացում, 8,25 մլն եվրո), ՀՀ 2017-2036թթ. կոչտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարություն (նպատակն է ՀՀ ողջ տարածքում ստեղծել ԿԿ թափոնների կառավարման ինտեգրված համակարգ, 90 մլն եվրո): Ներկաների հնչեցրած մտահոգությունների, կարծիքների ու դիտողությունների վերաբերյալ հա-

ԲԱԿՈ ՍԱՅԱԿՅԱՆ. «Մենք եղել ենք, կանք ու այսուհետ կմնանք ժողովրդավարական արժեքների եւ ազատ երկրում ապրելու կողմնակից»

Փետրվարի 20-ին ԼՂՀ սահմանադրական հանրաքվեի Սփե-փանակերպի 3/3 փեղամասում քվեարկություն կատարած Բակո Սահակյանը պատասխանեց լրագրողների հարցերին:

– Պարո՛ն նախագահ, ի՞նչ կարող է տալ հերթական հանրաքվեն Արցախի ժողովրդավարական զարգացումների տեսանկյունից:
– Նախ ուզում եմ շնորհավորել բոլորին՝ Արցախի վերածննդի օրվա կապակցությամբ: 1988թ. փետրվարի 20-ը սկիզբ դրեց մեր ազգային-ազատագրական շարժմանը եւ պետականության վերականգնմանը: Եվ այս տոնական օրը ձեզ հետ միասին մասնակցում ենք կարեւորագույն ու նշանակալի իրադարձության, ինչպիսին հանրաքվեն է: Մենք կարծում ենք, որ հանրաքվեն քայլ առաջ է մեր պետականաշինության գործում:

– Երբ քվեաթերթիկը գցում էիք քվեատուփի մեջ, ի՞նչ էիք մտածում, ի՞նչ էիք հիշում, 29 տարի առաջ պատկերացնո՞ւմ էիք մի օր, որ Արցախը կունենա իր սահմանադրությունը, այն էլ՝ երկրորդ անգամ բարեփոխված, նորացված:
– Գիտե՞ք, այդ տարիները լավագույն ապացույցն են մեր անշեղ

էջ 5



աշխատանքային տարածքներ եւ շինություններ: Արժեքը՝ 2-3 մլն եվրո, խնձորենու թզուկան լարային այգիների հիմնում (գտնվում է մշակման փուլում, նախատեսվում է Սյունիքի մարզում հիմնել 60-80 հա խնձորենու թզուկան լարային այգի իր սեփական ենթակառուցվածքով, 2,4-2,9 մլն եվրո), կենսասնու թզուկան լարային այգու հիմնում (գտնվում է մշակման փուլում, նախատեսվում է Տեղ համայնքի տարածքում հիմնել 30-40 հա կենսասնու այգի՝ իր սեփական ենթակառուցվածքով՝ ջրային տարողություններ, սառնարան, աշխատանքային տարածքներ, 1,5-1,9 մլն եվրո), արդիական անասնապահության ֆերմայի հիմնում (գտնվում է մշակման փուլում, Սյունիքի մարզում անասնապահության զարգացման նկատմամբ ներկից ելնելով՝ նախատեսվում է Սիսիան համայնքում հիմնել արդիական մեթոդներով ստեղծված խոշոր եղջերավոր անասունների ֆերմա՝ մսի եւ պանրի արտադրության համար, 2,5-3 մլն եվրո), Տաթևի վերածնունդ ծրագիր (վանական համալիրի վերականգնում, հարակից համայնքների զարգացում, 4 մլն դոլար), տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանում՝ որպես հիմնական նախապայման տեղական տնտեսական զարգացման համար (սննդի վերամշակման եւ տուրիզմի զարգացում, 1,6 մլն եվրո), ինտեգրված աջակցություն Հայաստանի գյուղական շրջանների կայուն տնտեսական զարգացմանը (գյուղատնտեսություն, սննդի վերամշակում, էներգետիկա, 1,34 մլն եվրո), բնապահպանական մարտահրավերների վերածնունդ հնա-

մապատասխան պարզաբանումներ հնչեցրին պատասխանատու անձինք:

«Վերջարարյալից հասկանալի է, որ ծրագիրը հավակնոտ է, խոստումնակալից, ինչ-որ առումով նաեւ ուսույթատեսակի:»

Մասնավորապես հետաքրքիր էր, թե որքանով այն կնպաստի հատկապես սահմանամերձ գյուղերի զարգացմանը, պետությունն ինչ մասնակցություն ունի ծրագրերի իրականացման գործում եւ այլն: Ինչպես տեղեկացանք ներկայացված փաստաթղթից՝ ծրագրի իրականացման այլ ֆինանսավորման աղբյուրներից են Սյունիքի տարածքային զարգացման եւ ներդրման հիմնադրամը, տեղական ինքնակառավարման մարմինների ներդրումային ֆոնդերը, կենտրոնական բյուջեից տրամադրվող ֆոնդերը (այդ թվում՝ ապագա տարածքային զարգացման ֆինանսավորման մեխանիզմ, որը կստեղծվի 2017թ. եւ կիրականացվի սկսած 2018թ.-ից), դոնորների եւ միջազգային ֆինանսական հաստատությունների միջոցները, ոչ հասարակական կազմակերպությունների եւ մասնավոր հատվածի ֆինանսավորման միջոցները:

Փաստաթղթի վերջնական տարբերակի ընդունումից հետո կլինեն խորհրդատվություններ նախարարությունների հետ, որին կհաջորդի մարզի զարգացման ռազմավարության հաստատումը ՀՀ կառավարության կողմից:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿՈՐՅՈՒՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ. «Սյունյաց աշխարհում ծառայելու ողջ ժամանակաընթացքում զգացել եւ զգում եմ սպայի ծառայության պատվաբեր լինելը...»

Ընտանիքը հասարակությունն է մանրակերտ ձեւի մեջ, որի ամբողջականությունից է կախված մարդկային մեծ հասարակության անվտանգությունը: Պատահական չէ, որ հողվածի մուտքի խոսքի համար այս տողերն ենք ընտրել. չէ՞ որ հայերս բոլոր ժամանակներում էլ արժեւորել ենք ընտանիքի դերը՝ նրա ամրությունը համարելով պետության հիմքերից մեկը: Այլ հարց է, որ այսօր ընտանիքի ինստիտուտի հիմքերը խարխուլվում են՝ տարբեր պատճառներից ելնելով, բայց դրանց քննարկումը թողնենք մեկ այլ հրապարակման համար: Առհասարակ մենք այն կարծիքի ենք, որ ՋԼՄ-ներով պետք է ավելի շատ ներկայացվեն կայացած ընտանիքների մասին պատմություններ, որոնք կարող են օրինակ ծառայել բոլորի համար:

Գաղտնիք չէ, որ այսօր ամուսնավորությունների մի զգալի մասի պատճառը պայմանավորված է ամուսինների մասնագիտությամբ: Այսօր հաճախ կարելի է լսել այն տեսակետը, որ երիտասարդ աղջիկներից շատերը խուսափում են զինվորականների հետ ընտանիք կազմել, քանի որ ծառայության բերումով հաճախ են



Կորյուն Ավետիսյանը փրկնոջ՝ Ամալյայի հետ

փոխում բնակության վայրը, ամուսինները մարտական առաջադրանքների կատարման պատճառով տնից օրերով բացակայում են եւ այլն: Ինչեւէ, այդ ամենը թողնելով մի կողմ՝ մեր հողվածի հերոս ենք դարձրել Սիսիանի N զորամասի դիվիզիոնի հրամանատար, մայր Կորյուն Ավետիսյանի երիտասարդ, բայց արդեն ավանդույթներ

էջ 7

Ռոբերտ Էջանյանի անվան կրթաթոշակ՝ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին

Փետրվարի 21-ին Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղում Այոնյանի մարզպետ Վահե Հակոբյանի հետ ուսանողության հանդիպումը նշանակալից անակնկալով: Մասնաճյուղի բարձր առաջադիմություն ունեցող 37 ուսանող ստացավ Ռոբերտ Էջանյանի անվան կրթաթոշակ: «Ուստարվա յուրաքանչյուր կիսամյակում 85 ել ավելի ՄՈԳ (միջին որակական գնահատական) ունեցող ուսանողները ստացան անվանական կրթաթոշակ՝ վճարովի համակարգում սովորողները՝ 250 հազարական դրամ, անվճար համակարգում սովորողները՝ 150 հազարական դրամ: Մարզպետի հավաստմամբ՝ պարգևատրումը շարունակական բնույթ կկրի, ել ցանկալի կլինի, որ հաջորդ տարի ուսանողների թիվն ավելանա: Սա իսկապես անսպասելի ել հաճելի անակնկալ էր, որը լավ սովորելու խրախուսման գործում հեղափոխական մոտեցում կարելի է համարել», – նշեց մասնաճյուղի մոդերնիզացիայի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Արթուր Կոստանյանը, ով դեկտեմբերի 9-ին տնօրենի պաշ-

տոնակատար նշանակվելուց հետո փետրվարի 15-ին կայացած մրցույթում փակ գաղտնի քվեարկությամբ ընտրվել է մասնաճյուղի տնօրեն: Ինչպես տեղեկացանք, ֆինանսավորումն իրականացնում է Այոնյանի մարզի զարգացման ել ներդրման հիմնադրամը: Ռոբերտ Էջանյանի անվան կրթաթոշակը սահմանել է Այոնյանի մարզպետը ել տրվում է ուսունառության ընթացքում 85 ել ավելի ՄՈԳ ունեցող մարզի պետական բուհերի բոլոր ուսանողներին: Տնօրենն իր երախտագիտությունը հայտնեց այդ անակնկալի համար ել հանդգնումը հայտնեց, որ սա կրթության որակի բարձրացմանը խթանող լավագույն միջոցներից է, ինչը կստեղծի գիտելիքի գնահատման լրացուցիչ վերահսկման մոդել: «Խրախուսումն առողջ մրցակցություն կստեղծի ուսանողների միջև, կծեւավորվի մի սերունդ, որը չի հանդուրժի գիտելիքի հանդեպ խնդրանքները վերաբերմունք ել ոչ ճիշտ գնահատական», – նշեց Ա.Կոստանյանը: Չնայած կարճ ժամանակահատված է անցել պաշտոնավարումից, այնուամենայնիվ տնօրենին խնդրե-



ցիքը խոսել մասնաճյուղի մի քանի խնդրից: Նա նշեց, որ առաջնահերթ խնդիրը եղել ել մնում է ուսուցման բարձր որակի ապահովումը, լավ սովորելու խթանումը, ուսանողական ակտիվ կյանքի կազմակերպումը ել ծրագրային, մեթոդական, փաստաթղթային առումով մայր բուհին լիարժեք համապատասխանեցումը: «Տարածքային հեռավորությունը որոշ դեպքերում մասնակի տարբերություններ է առաջացրել, բայց պետք է կարեւորեցնել մասնաճյուղի հասկացությունը, որը լիարժեք պետք է օգտվի մայր բուհի ընձեռած հնարավորություններից», – տեղեկացրեց տնօրենը: Ուսանողների լավ սովորելը

կապան կլինիկաների» գաղափարը, որտեղ յուրաքանչյուրը կարող է ստանալ անվճար առաջնային իրավաբանական օգնություն՝ սկսած պետական մարմիններից հասցեագրվող դիմումների շարադրանքից, մինչեւ դատական վերահսկողության դիմելը: – Զեր նշանակումից հետո ամենաաղմկահարույցը, հավանաբար, կադրային որոշումներն էին, մասնավորապես՝ առողջապահության ոլորտում: Ռ՝ն է Զեր մոտեցումը: – Արդեն ասացի, որ մենք առաջնահերթ ենք համարում եղած միջոցների արդյունավետ տնօրինումը: Հայտնի է, որ սուղ նյութական ռեսուրսների պարագայում արդյունավետ ել ազնիվ կառավարումը առավել կարեւոր է, իսկ եղած կադրային փոփոխություններն արվել են բացառապես այդ նպատակով: Զկա՝ անձնավորված մոտեցում, չկան այլ հանգամանքներ: Նպատակը մեկն է՝ բացառել անճորձ միջադեպերը ել վերականգնել հասարակության վստահությունը մարզի բժշկական հաստատությունների նկատմամբ: Առողջապահական ծառայությունները պետք է հասանելի լինեն մարզի բնակիչներին ժամանակից ել պատշաճ մակարդակով: Պետք է մատուցվի որակյալ մասագիտական ծառայություն, քանի որ գործ ունենց մարդկային կյանքի, առողջության հետ: Թերացումներն այս ոլորտում հաճախ անդառնալի հետեւանքներ են ունենում, ինչը պարզապես անթույլատրելի է: Որոշ մարդիկ թյուրիմացաբար կարծում էին, թե իրենց, մեղմ ասած, բացթողնումները, մասնագիտական ու կառավարչական թերացումները անտեսելու ու կոծկվելու են: Նրանք, հավանաբար, մոռանում են, որ Հիպոկրատի երդումն են տվել ոչ թե աթոռից կաշած մնալու, այլ իրենց մասնագիտական պարտքը հավուր պատշաճի կատարելու համար: Մի բան հստակ է. թերացումներ չեն հանդուրժելու՝ հատկապես առողջապահության ոլորտում: – Մի պահ աղմուկ էր բարձրացել՝ կապված Գորիսում հացի թանկացման հետ: Եի՛չտ է, որ

իսթանբուլ կարելու քայլերից մեկն էլ «Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության հետ ձեռք բերված համաձայնությունն է, ըստ որի՝ ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի քսան ուսանող հնարավորություն կունենա արտագրական պրակտիկայի ընթացքում թեկուզ կես դրույթով աշխատել ընկերությունում: Սա, բնականաբար, ոգեւորիչ է ել հետագայում ավելի կնպաստի ուսանողի թե՛ գիտելիքների հարստացմանը, թե՛ աշխատանքային գործունեությանը: Ա.Կոստանյանը տեղեկացրեց նաեւ, որ «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերության տնօրեն Դմիտրի Ուշկովի հետ նույնպես նախնական պայմանավորվածություն ունեն, որը դեռեւս քննարկման փուլում է: Ըստ հետագայում կնքվելիք եռակողմ պայմանագրի՝ տոյալապես անապահով, բայց բարձր առաջադիմություն ունեցող 2-3 ուսանողի վարձավճարը կհատկացնի Կապանի լեռնահարստացման կոմբինատը՝ պայմանով, որ ուսումն ավարտելուց հետո նրանք կաշխատեն ձեռնարկությունում: Մասնաճյուղի կանոնադրության կետերից մեկի համաձայն՝ բուհի նպատակներից է նաեւ անհատի համակողմանի զարգացումը, ազգային, բարոյական ել համամարդկային արժեքների ոգով դաստիարակելը: Այդ նպատակով նախաձեռնվում է

«Անում ենք ել անելու ենք հնարավոր ամեն բան, որ հանրության վստահությունն արդարանա ել ամրապնդվի»

Եջ 1 կարող եմ հպարտությամբ նշել, որ այս գործում մենակ չեմ եղել: Մարզպետ նշանակվելուս առաջին իսկ օրվանից զանգեր եմ ստանում մարզկանցից, ում հետ ճանապարհ եմ անցել, ընկերներիցս, բազմաթիվ մտահոգ անձանցից, ովքեր մարզում առկա խնդիրների լուծմանն աջակցելու պատրաստակամություն էին հայտնում: Դեռ այդ ժամանակ էլ ծագեց «Այոնյանի զարգացման ել ներդրումների» հիմնադրամ ստեղծելու գաղափարը, որի նպատակն է աջակցել մարզում առկա տոյալական խնդիրների լուծմանը ել օժանդակել տեղական բիզնեսի զարգացմանը: Հատկապես Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, որը մշտապես առաջնորդվում է բիզնեսի օտոյալական պատասխանատվության սկզբունքով, առաջին իսկ օրվանից կանգնեց հիմնադրամի կողքին: Իրականացվող քայլերի վերաբերյալ էլ ասեմ, որ շատ կարճ՝ ընդամենը մեկ ամսվա գործունեության ընթացքում արդեն իսկ լուրջ աշխատանքներ են կատարվել: Հիմնադրամի միջոցներով վճարվել է 2012 թվականի սերնացումների պարտքը, իսկ ընթացիկ տարում պլանավորվում է վճարել 2013 թվականի պարտքը: Հիմնադրամն իրականացնում է Կապանի հասարակական տրանսպորտի գնի սուբսիդավորում, ել 70 դրամի փոխարեն քաղաքացիներին վճարում է 50 դրամ: Հիմնադրամի միջոցներով կարգավորվում է ցրամատակարարման խնդիրներ ունեցող համայնքների հարցը: Տեղադրվում է հատուկ ճնապաշտպան ցանց Սի-

սիան-Գորիս ճանապարհի վրա, ինչը թույլ կտա հնարավորինս անցանելի պահել ճանապարհը՝ անկախ եղանակային պայմաններից: Հիմնադրամի միջոցներով ֆինանսական աջակցություն է տրամադրվում ապրիլյան քառօրյա պատերազմում զոհված սյունեցի հերոսների ընտանիքներին: Ի դեպ, այս պահին վավերագրական ֆիլմ է նկարահանվում ապրիլյան պատերազմում զոհված սյունեցիների մասին: Պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղի, Հայաստանի պետական ազրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղի ել Գորիսի պետական համալսարանի գերագույն առաջադիմություն ցուցաբերող ուսանողների համար կրթաթոշակ է սահմանվել: Աջակցություն է ցուցաբերվում տեղական բիզնեսին: Ուսումնասիրություններ են սկսվել Կապան քաղաքի օդանավակայանի հնարավոր վերագործարկման ուղղությամբ: Գյուղացիներին օժանդակելու նպատակով ծրագրում ենք Մեղրիում հիմնել սառնարանային տնտեսություն, ինչը կթեթևացնի գյուղմթերքի իրացման հետ կապված խնդիրները: Սիսիան ել Տեղ համայնքներում ստեղծելու ենք գյուղատնտեսական ժամանակակից տեխնիկայի պարկեր, որի արդյունքում կբարձրանա հողերի մշակման արդյունավետությունը: Հիմնում ենք այգիներ, արտադրամասեր: Մեր կողմից իրականացվելիք ծրագրերը բազմաթիվ են, ել այն իրողությունը, որ մեր աշխատանքն ակնհայտ դրական արդյունքներ է տալիս, վստահություն ել լավատեսություն է ներշնչում: – Այսօր գործադրություն

առավել ցավոտ խնդիրներից է, ել չնայած Այոնյանի մարզում կան բազմաթիվ ձեռնարկություններ, բայց այնտեղ էլ զբաղվածությունը լուրջ խնդիր է: Ի՞նչ եք նախատեսում անել այս ուղղությամբ: – Աշխատատեղերի ստեղծմանը նպաստում է բիզնեսի զարգացումը, որի մասին քիչ առաջ խոսում էի: Կարելու պիլոտային ծրագիր ենք սկսել «Այոնյանի զարգացման ել ներդրման հիմնադրամի» ել մի շարք հասարակական կազմակերպությունների հետ համատեղ: Սիսիանի, Գորիսի, Կապանի ել Մեղրիում 4 դպրոցներում ստեղծում ենք ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած զբաղվածության կենտրոններ, որոնցում ներգրավված բարձրակարգ մասնագետներն աշխատելու են մի քանի տասնյակ ընտանիքների հետ: Ուսուցանվելու են խոհարարություն, օտար լեզուներ, տուրիզմի ու գյուղատնտեսության զարգացման հմտություններ: Մարզում զբուսաշրջության զարգացման նպատակով նախատեսվում է վերանորոգել ծրագրում ներգրավված ընտանիքների տները, որը հնարավորություն կտա այդ ընտանիքներին իրենց տներում հյուրընկալել զբոսաշրջիկների ել աշխարհում ընդունված B&B (bed and breakfast) ծառայություն մատուցել: Սա կանոնավոր եկամտի լավ աղբյուր կարող է դառնալ: Ստեղծելու ենք ել գյուղացիներին օգնելու ենք ստեղծել ցերմոցներ, բարելավել արտադրությունը ել ամենակարեւորը՝ աջակցելու ենք արտադրանքի իրացմանը: Ծրագրի զլխավոր նպատակն է ստեղծել պայմաններ, որպեսզի մարդիկ կարողանան իրենց աշխատանքով հոգալ սեփական կարիքները: Մեր պատկերացմամբ՝ սա օգնության լավագույն տարբերակն է ել եւայես կնպաստի մարզում զբաղվածության մակարդակի աճին: Մի կարելու բան էլ հաշվի առնելով քաղաքացիների, տյալ դեպքում մեր մարզի բնակիչների իրավունքների լիարժեք իրացման ել պաշտպանության խնդիրը՝ հիմա քննարկում ենք ել մոտ ժամանակներս գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ պետք է ներդրենք, այսպես կոչված, «իրա-

վական կլինիկաների» գաղափարը, որտեղ յուրաքանչյուրը կարող է ստանալ անվճար առաջնային իրավաբանական օգնություն՝ սկսած պետական մարմիններից հասցեագրվող դիմումների շարադրանքից, մինչեւ դատական վերահսկողության դիմելը: – Զեր նշանակումից հետո ամենաաղմկահարույցը, հավանաբար, կադրային որոշումներն էին, մասնավորապես՝ առողջապահության ոլորտում: Ռ՝ն է Զեր մոտեցումը: – Արդեն ասացի, որ մենք առաջնահերթ ենք համարում եղած միջոցների արդյունավետ տնօրինումը: Հայտնի է, որ սուղ նյութական ռեսուրսների պարագայում արդյունավետ ել ազնիվ կառավարումը առավել կարեւոր է, իսկ եղած կադրային փոփոխություններն արվել են բացառապես այդ նպատակով: Զկա՝ անձնավորված մոտեցում, չկան այլ հանգամանքներ: Նպատակը մեկն է՝ բացառել անճորձ միջադեպերը ել վերականգնել հասարակության վստահությունը մարզի բժշկական հաստատությունների նկատմամբ: Առողջապահական ծառայությունները պետք է հասանելի լինեն մարզի բնակիչներին ժամանակից ել պատշաճ մակարդակով: Պետք է մատուցվի որակյալ մասագիտական ծառայություն, քանի որ գործ ունենց մարդկային կյանքի, առողջության հետ: Թերացումներն այս ոլորտում հաճախ անդառնալի հետեւանքներ են ունենում, ինչը պարզապես անթույլատրելի է: Որոշ մարդիկ թյուրիմացաբար կարծում էին, թե իրենց, մեղմ ասած, բացթողնումները, մասնագիտական ու կառավարչական թերացումները անտեսելու ու կոծկվելու են: Նրանք, հավանաբար, մոռանում են, որ Հիպոկրատի երդումն են տվել ոչ թե աթոռից կաշած մնալու, այլ իրենց մասնագիտական պարտքը հավուր պատշաճի կատարելու համար: Մի բան հստակ է. թերացումներ չեն հանդուրժելու՝ հատկապես առողջապահության ոլորտում: – Մի պահ աղմուկ էր բարձրացել՝ կապված Գորիսում հացի թանկացման հետ: Եի՛չտ է, որ

գները կարգավորվել են Զեր միջամտությունից հետո: – Անձամբ ես համարում եմ, որ որեւէ մեկի բիզնեսին միջամտել չի կարելի: Հունվարի սկզբին տեղեկություն ստացանք, որ Գորիս քաղաքում հացը թանկացել է 20-40 դրամով: Հաջորդ օրը մենք հանդիպեցինք Գորիսում հացի արտադրությանը զբաղվող բոլոր գործարարների հետ: Քննարկման արդյունքում նույն օրը վերականգնվեց նախկին գինը: Ի դեպ, ասեմ, որ առաջիկա 1 ամսվա ընթացքում Կապան քաղաքում մեր գործընկեր մասնավոր ձեռնարկատիրոջ կողմից կգործարկվի լիովին մոր, գերմանական ժամանակակից սարքավորումներով հագեցած ալրադաց, ինչը ես իր ազդեցությունը կունենա մարզի հացամթերքի շուկայի զարգացման վրա: – Եվ վերջում Հանրապետական կուսակցության մասին: Ի՞նչ եք կարծում՝ առաջիկա ընտրություններում ՀՀԿ-ին կհաջողվի՞ Սյունիքում ստանալ վստահության բարձր քվե: – Հասարակությունն իր գնահատականը կտա: Այո, վստահ եմ, որ Հանրապետական կուսակցությունը Սյունիքի մարզում բարձր ցուցանիշ է գրանցելու: Համոզված եմ, որ եթե, իսկապես, ազնիվ ել լավ ես կատարում աշխատանքը, ապա արժանանում եմ բարձր գնահատականի ել վստահության: Մեր թիմի աշխատանքի լավագույն գնահատականն այս փուլում այն է, որ մարզում Հայաստանի հանրապետական կուսակցությանն անդամագրվելու համար վերջին ամսում ավելի քան 5000 դիմում ենք ստացել, որոնք ուսումնասիրության փուլում են: Մարդիկ տեսնում ել ընդունում են փոփոխությունները, ուզում են դրանց մասնակից դառնալ: Սա մեր թիմի հանդեպ վստահության դրսեւորում է, ինչն, ամիսուս, ոգեւորիչ, բայց միեւնույն ժամանակ խիստ պարտավորեցող է: Մենք անում ենք ել անելու ենք հնարավոր ամեն բան այս վստահությունն արդարացնելու ել ամրապնդելու համար: **ՀՈՎՅԱՆՆԵՍ ԲԱԲԱՅԱՆ «Առավուր» 11.02.2017թ.**



Սահմանադրական հանրաքվեից հետո՝ Արցախի Հանրապետություն, իսկ պետության գլուխն ու գործադիր իշխանության ղեկավարը հանրապետության նախագահն է

Եթե 1 նակ էր, ինչը նշանակում էր, որ սահմանադրական փոփոխությունների հանրաքվեին մասնակցելու հնարավորություն է ընձեռված հանրապետության բնակչության 69.9 տոկոսին: Հանրաքվեն ընդգրկում է 11 ընտրատարածք՝ յուրաքանչյուրում ութ-ինը հազար ընտրող: Կազմավորվել էր հանրաքվեի 280 տեղամասային հանձնաժողով, որոնցից մեկը՝ Երեւան քաղաքում՝ քվեարկության օրն Արցախի Հանրապետության քաղաքացիների մասնակցությունն ապահովելու նպատակով, իսկ մյուսը՝ Շուշիի քրեակատարողական հիմնարկում՝ ազատազրկվածների համար:

Ա.Արզումանյանն անդրադարձ կատարեց հանրապետության կազմավորման ընթացքում անցկացված քաղաքական միջոցառումներին: Արցախի քառորդարյա գործունեության ընթացքում կազմակերպվել են համապետական նշանակության երկու հանրաքվե, հանրապետության նախագահի հինգ ընտրություն, խորհրդարանական վեց ընտրություն, տեղական հանրաքվեներ, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Արցախի Հանրապետությունում ընտրությունները միշտ աչքի են ընկնում քաղաքացիների ակտիվ մասնակցությամբ. 1991 թվականի ԼՂՀ-ի անկախության հանրաքվեին մասնակցել է ընտրողների 82.2 տոկոսը, իսկ 2006թ. ԼՂՀ գլխավոր օրենքի՝ Սահմանադրության հանրաքվեին՝ 87.2 տոկոսը, ընտրություններին ընտրողների մասնակցության միջին ցուցանիշը 65-70 տոկոս է: Ա.Արզումանյանը համոզմունք հայտնեց, որ սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն եւս կանցնի ընտրողների ակտիվության պայմաններում:

Այնուհետեւ օրվա բանախոսը պատասխանեց միջազգային դիտորդների եւ լրագրողների հարցերին: Առաջին հարցը, որ հնչեց, այն էր, թե ինչպիսի՞ խախտումներ են արձանագրվել նախորդ ընտրությունների ժամանակ եւ ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել, որ դրանք այս հանրաքվեի ժամանակ չկրկնվեն: Պատասխանվեց, որ նախորդ ընտրությունների ժամանակ պաշտոնական բողոքներ չեն եղել՝ բացառությամբ Ստեփանակերտ քաղաքի մի ընտրատարածքում արձանագրված քվեաթերթիկների վերջնահաշվարկի պահանջի. վստահված անձանց կողմից որոշակի թերություններ էին արձանագրվել, ինչը, սակայն իրենց իսկ ներկայությամբ իրակա-

նացված վերջնահաշվարկի ժամանակ չի հաստատվել: Քվեարկության արդյունքները մնացել են անփոփոխ: «Այունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանին հետաքրքրում էր, թե Թալիշ գյուղի բնակիչները, ովքեր ժամանակավորապես բնակվում են Հայաստանի Հանրապետությունում, ինչպես են իրականացնելու իրենց ընտրելու իրավունքը, երկրորդը՝ հայտնի բլոգեր Լապչինին Արդեշանցին արտահանձնելն անդրադարձ կունենա՞ միջազգային լրագրողների եւ դիտորդների՝ Արցախ այցելության վրա, մասնավորապես, կապված հանրաքվեի հետ: Բանախոսն իրազեկեց, որ թալիշցիների քվեարկությունը կազմակերպ-



Բոլիվիայի խորհրդարանի պարզամտները պարասխանում են «Այունյաց երկիր» հարցերին

վելու է ԼՂՀ Մարտակերտի շրջանի Ալաշան կղզվող տեղամասում, որտեղ կենտրոնացված է Թալիշ գյուղի բնակչության մեծամասնությունը, եւ մյուսների մասնակցությունն ապահովվելու է Երեւանում գտնվող ԼՂՀ մշտական ներկայացուցչություն: Ինչ վերաբերվում է բլոգերի արտահանձնմանն Արդեշանցին, բանախոսի համոզմունքով՝ դա չի ազդի միջազգային դիտորդների եւ լրագրողների այցերի վրա Լեռնային Ղարաբաղ:

Միջազգային դիտորդներ

Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեին դիտորդի կարգավիճակով մասնակցում էր 34 երկրի ավելի քան 104 ներկայացուցիչ: Սամուլի ասուլիսի ավարտից հետո ձեպագրույց ունեցանք նրանցից մի քանիսի հետ: Բելգիայի խորհրդարանից մասնակցում էր երկու պատգամավոր. Սերժ Դեպատուլը երկրորդ անգամ է Լեռնային Ղարաբաղում դիտորդական առաքելությամբ, այս անգամ ձեռն է եկել, հիմնական փաստը, որ նրան ուրախացնում է, այն է, որ ընտրությունների հետ կապված ժողովրդավարական բոլոր նորմերը պաշտպանվում են, փորձում են համապատասխանեցնել եվրոպական չափանիշներին: Պատգամավորը փոխանցեց նաեւ, որ Բելգիայի խորհրդարանում հանդիպել են Արցախի արտգործնախարար Կարեն Միրզոյանի հետ. մի քանի պատգամավոր քաջատեղյակ են Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին, հայկական լրբքինգն է նպաստում, որ պատգամավորները տեղյակ լինեն: Իրենց այցը նաեւ խորհրդատվական բնույթ է կրում, քան ինչ-որ տեղ հաշվետվություն տալու: Պատգամավորը նաեւ փոխանցեց, որ իրենց չի հուզում, թե Արդեշանցին ինչ դիրքորոշում կընդունի իրենց հանդեպ:

Բոլիվիայի խորհրդարանի երեք պատգամավոր Արցախ է եկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եւ Արգենտինայի հայ համայնքի հրավերով: Նրանցից Նելլի Լենս Ռոսսոն փոխանցում է, որ իրենք հանդիպումներ են ունեցել հանրապետության եւ Ազգային ժողովի նախագահների հետ, ինչից պարզ դարձավ, թե ինչի է ձգտում Արցախի ժողովուրդը, ինչպես են Բոլիվիայի ժողովուրդը, որ շատ է տուժել գաղութարարների լծից: Այսօր Բոլիվիան ինքնավար, ազատ պետություն է: Պատգամավորը տպավորված էր Արցախի ժողովրդի պատմությամբ, մանավանդ նրանով, որ պատերազմից հետո երկիրը կարողանում է վերականգնվել, եւ սրտանց մաղթում է, որ մարդիկ կարողանան հաղթահարել բոլոր դժվարությունները: Մինչ գալն Արցախի

մասին ոչինչ չգիտեր, այստեղ գալով հասցրել են լինել Շուշիի Սուրբ Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցում, Արցախի այցեքարտ համարվող «Մենք ենք, մեր սարերը» հուշարձանի մոտ: Եվ ուրախ է, որ կարողացան որոշակի պատկերացում կազմել իրենց այցելած երկրի մասին:

Փետրվարի 20, հանրաքվե

Փետրվարի 20-ի առավոտյան «Այունյաց երկիր» թերթի ստեղծագործական խումբը (գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյան, լրագրող Վահրամ Օրբելյան, լուսանկարիչ Արթուր Միրզոյան, ուղեկցող Ռաֆիկ Հարությունյան) ուղղություն վերցրեց դեպի Ասկերանի վարչական շրջան: Ասկերանի ընտրատարածքի N5/1 տեղամասը տեղավորված էր Ասկերանի մշակույթի եւ երիտասարդության կենտրոնում: Առաջինը, որ գրավեց մեր ուշադրությունը, ընտրողների ակտիվությունն էր: N5/1 տեղամասային հանձնաժողովի նախագահ Ռուզաննա Մկրտչյանը տեղեկացնում է, որ տեղամասում ընդգրկված է 1627 ընտրող, որից ժամը 10-ի դրությամբ մասնակցել է 120-ը: N5 ընտրատարածքում ընթանում էր նաեւ ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավորի թափուր տեղի համար ընտրություն: Առաջադրված է երկու թեկնածու՝ Վաչիկ Բալասանյան եւ Վիլեն Սաֆարյան: Հանձնաժողովի նախագահը տեղեկացնում է, որ սահմանադրական փոփոխությունների մասին քննարկումներ են եղել, ընտրողներն իրազեկ են, որ Արցախն անցնում է կառավարման նախագահական մոդելի:

– Արցախյան պատերազմն ապացուցեց, որ մեզ համար անհրաժեշտ է կառավարման այդ ձեւը, – վստահ է մեր գրուցակիցը, – պիտի ունենանք միասնական եւ կենտրոնաձիգ ղեկավարում: Ասկերանի կոմունալ տնտեսության տնօրեն Աշոտ Սարգսյանը կարծում է, որ ավելի նպատակահարմարը նախագահական ղեկավարումն է, քանզի պատերազմական իրավիճակում գտնվող երկրի համար որոշում ընդունելիս հարկ չի լինի խորհրդարանի արտահերթ նստաշրջան հրավիրել եւ որոշել՝ թշնամուն հարվածել, թե՞ ոչ: Կատակված անձ, Արցախի երիտասարդ գիտնականների եւ մասնագետների միավորման անդամ Յուլիա Ավանեսովը փոխանցում է, որ ընտրությունը՝ թե՛ հանրաքվեի, թե՛ պատգամավորի թափուր տեղի համար, բնականոն հունով է անցնում, օրվա երկրորդ կեսին ավելի կակտիվանա:

Մեր հաջորդ կանգառն Իվանյան (նախկին խոջալու) գյուղն է, որտեղ ընտրատեղամասը տեղակայված էր դարոցում: Այստեղ եւս վարկու-



Բելգիայի խորհրդարանի պարզամտներ Սերժ Դեպատուլը (աջից) պարասխանում է «Այունյաց երկիր» հարցերին



ԼՂՀ վարչապետ Արա Յարությունյանի ճեպագրույցը քվեարկությունից հետո

թյունն ակտիվ էր ընթանում: Նախկին զինծառայող Գառնիկ անունով ընտրողը հայտնում է, որ քարոզարշավի ընթացքում եւ «այո»-ի եւ «ոչ»-ի կողմնակիցները հանդիպել են ընտրողների հետ, ներկայացրել իրենց տեսակետները: Ասկերանի շրջանում գործնականորեն հետո շարժվեցինք մայրաքաղաք Ստեփանակերտ: Ստեփանակերտի եղիշե Զարեմ-ցի անվան միջնակարգ դպրոցում տեղակայված տեղամասում, որ քաղաքի կենտրոնում է գտնվում, առավոտից միջազգային դիտորդներ էին այցելել Կալիֆորնիայից, Եվրախորհրդի պատգամավորներ: «Գրանցամատյանի թերթը չի հերիքում դիտորդների անուններ գրել», - ասում է հանձնաժողովի անդամներից մեկը:

Առավել աշխույժ ու մարդաշատ էր Ստեփանակերտի Գայկ Բալասանյանի անվան միջնակարգ դպրոցի բակը: Կրթօջախում տեղակայված է հանրաքվեի N3/3 տեղամասը: Հին օրերի հանգույն այստեղ զուռնա-դիուլի ձայնն է տարածվել: Լրագրողների պակաս եւս չէր զգացվում: Պատճառն ինքնին հասկանալի է. այստեղ պետք է քվեարկեն հանրապետության նախագահն ու վարչապետը: Նախ քվեարկության է գալիս վարչապետ Արա Յարությունյանը, քաղաքացիական պարտքը կատարելուց հետո վարչապետին օղակում են լրագրողները, նրան հարցեր ուղղում:

– Երբ անձնագիրս ներկայացնում էի քվեաթերթիկ ստանալու, հիշեցի 1988 թվականի փետրվարի 20-ը: Իհարկե, երազում էի մեծ նախապայմաններով, այդ երկիրը գնում է բարեփոխումների՝ նպատակ ունենալով ժողովրդավարական արժեքներն ավելի խոր ամրապնդել, – ասաց վարչապետը:

Լրագրողի դիտարկմանը, թե Յարությունյանն անցում է կատարում կառավարման խորհրդարանական ձևին, իսկ հայկական երկրորդ հանրապետությունը նախընտրում է նախագահական կառավարումը, վարչապետն ասաց, թե ժողովրդավարության սկզբունքներով Արցախի փոփոխվող սահմանադրությունը եվրոպական ոչ մի ժամանակակից սահմանադրության չի գիջում: Դրանում համոզվելու համար պարզապես պիտի ուսումնասիրել սահմանադրությունը:

– Կառավարման կիսանախագահական մոդելն ունի քաղաքական



Կենտրոնական հանձնաժողովի նախագահ Սրբենի Արզումանյանը



«Այոնյաց երկիր» խմբագիր Սամվել Ալեքսանյանը հարց է ուղղում հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի նախագահ Սրբենի Արզումանյանին

վտանգներ, դրանցից խուսափելու համար մենք ընտրել ենք այս մոդելը, որտեղ, ինչքան հնարավոր է, պիտի խուսափել քաղաքական ռիսկերից: Ժողովրդին պիտի տրվի ավելի մեծ լիազորություն եւ ժողովրդի ընտրությամբ պետք է կառավարման մոդելն ավելի հեշտ փոփոխվի: Գործող մոդելը դա թույլ չի տալիս, առաջարկվող մոդելը շատ ժողովրդավարական, պաշտամենտարիզմի բոլոր կարեւոր պայմանները նախատեսած մոդել է: Իհարկե, ունենալով նախագահ, որ գործադիրի ղեկավարն է, բայց դա չի նշանակում, որ կառավարումը գերկենտրոնացված է մի անձի մոտ: Իսկ տնտեսական աճը պայմանավորված է կայունությամբ: Մեզ պետք է կայունություն, – իր խոսքը եզրափակեց վարչապետը:

Քիչ ավելի ուշ ընտրելու եկավ նաեւ նախագահ Բակո Սահակյանը՝ տիկնոջ հետ: Ընտրելուց հետո նախագահը եւս պատասխանեց լրագրողների հարցերին, որին անդրադառնում ենք առանձին:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

3.4. Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող 103793 քաղաքացուց քվեարկությանը մասնակցել է 79428 հոգի: Նրանցից 69540 հոգի (87,6 տոկոս) կողմ է քվեարկել սահմանադրության նախագծին, իսկ 7686 հոգի (9,7 տոկոս) անհամաձայնություն է հայտնել ներկայացված նախագծին:

ԲԱԿՈ ՍԱՅԱԿՅԱՆ. «Մենք եղել ենք, կանք ու այսուհետ կմնանք ժողովրդավարական արժեքների եւ ազատ երկրում ապրելու կողմնակից»

Ճանապարհի, եւ այս միջոցառմամբ, այս հանրաքվեով մենք մեկ անգամ եւս մեր հաստատականությունն ենք ներկայացնում, հավատարմությունն այն արժեքներին, որոնցով առաջնորդվել ենք երկար տարիների ընթացքում, եւ ոչ միայն հույս ունեն, այլեւ համոզված ենք՝ այն, ինչ տեղի է ունեցել մեր ազգային-ազատագրական պայքարի տարիներին, մեզ բերել է գերությունից ազատվելու հնարավորություն, մեզ համար ստեղծել բավականին նպաստավոր պայմաններ՝ ինքնուրույն մեր ճակատագիրը տնօրինելու, եւ հաստատուն քայլերով գնում ենք դեպի մեր երազած ապագան:

– Պարոն նախագահ, այն մարդիկ, ովքեր քննադատում են սահմանադրական փոփոխությունները, համաձայն չեն դրա հետ, ասում են՝ հիմնական նպատակը հնարավորություն ստեղծելն է, որ Դուք կարողանաք մնալ նախագահի պաշտոնում մինչեւ 2030 թվականը: Դուք մտադի՞ր եք առաջարկել Ձեր թեկնածությունն անցումային փուլի նախագահական ընտրություններում եւ 2020 թվականին:

– Առիթ ունեցել եմ այս շրջանում պատասխանելու... Երբ քաղաքական ուժերը նախաձեռնել են այս գործընթացը, նրանց նպատակը եղել է պարզ, այդ նպատակի մասին բազմիցս այս շրջանում բարձրաձայնվել է. այս քայլով մենք հետապնդում ենք լրացուցիչ հնարավորություններ մեր երկրի զարգացման ու շենացման համար, իսկ սահմանադրական բարեփոխումները են ընդհանրապես իրավական մշակույթ կոչված ոչ թե մեկ անձի նպատակները երաշխավորելուն եւ միտված, այլ կոչված են իրավական մշակույթի պայմաններում եւ շրջանակներում տվյալ երկրի կյանքը կառուցելուն, կենսագործունեությունն ապահովելուն: Այսպիսին է եղել մեր նպատակը, եւ բոլոր նրանք, ովքեր այլ կերպ են մեկնաբանում, ոչ միայն ճիշտ չեն, այլեւ, կարծում են, ազնիվ չեն:

– Իսկ դուք մնան նպատակ ունե՞ք:

– Մենք կենտրոնացել ենք սահմանադրական բարեփոխումների իրականացման աշխատանքների վրա եւ մեր քաղաքական ուժերի ներկայացուցիչների հետ պայմանավորվածություն ենք ձեռք բերել՝ երբ կգա ժամանակը, որ պարտավորված կլինենք խոսել մեր ապագայի մասին, այդ ժամանակաշրջանում էլ կհայտարարենք մեր որոշումների մասին:

– Պարոն Սահակյան, մի փոքր շեղվելով օրվա խորհրդից, ապրիլյան իրադարձությունների հետ կապված՝ ի՞նչ քայլեր են արվում նաեւ Արցախի ձայնը լսելի դարձնելու համար:

– Գիտեք, այսօրվա հանրաքվեն կարելի է դասել այդ միջոցառումների շարքին, սա հայտ է, հերթական հայտ ներկայացված նաեւ միջազգային հանրությանը, որ մենք շարունակելու ենք ժողովրդավարական արժեքներին կողմնակից լինել, հետեւողական լինել մեր աշխատանքներում եւ մեր գործունեության մեջ ու, կարծում են, բոլոր նրանք, ովքեր հնարավորություն են ունեցել նախկինում եւ այսօր դիտորդական առաքելություն իրականացնել, այս միջոցառումը եւս մեկ հնարավորություն է նրանց համար համոզվելու, որ մեր սկզբունքներից հետ չենք քաշվել: Եվ սահմանադրական բարեփոխումների այս գործընթացը չի վերանայում մեր պետականաշինության փիլիսոփայությունը:

Մենք եղել ենք, կանք ու այսուհետ կմնանք ժողովրդավարական արժեքների եւ ազատ երկրում ապրելու կողմնակից, եւ դիտորդական առաքելություն իրականացնողները, այս միջոցառմանը մասնակցելով, կարծում են, կհամոզվեն՝ այն, ինչ մենք ասում ենք, ինչ հայտարարում ենք, անբողոքյա՞մբ համապատասխանում է իրականությանը:

– Միջազգային հանրությունը հանրաքվեն լեգիտիմ չի համարում. բավականին կոշտ գնահատականներ հնչեցին, եւ ապրիլյան պատերազմից հետո անվտանգության գոտու ընդլայնման առումով ի՞նչ քայլեր են արվում, մասնավորապես Թալիշի ուղղությամբ:

– Դուք հնարավորություն ունեք հետեւելու. ժամանակ առ ժամանակ մեր լրատվական ոլորտի պատասխանատուները, ներկայացուցիչները լուսաբանում են այն աշխատանքները, որ իրականացվում են Թալիշում ու Մարտակերտի շրջանում: Եվ առաջարկում են այս օրերն օգտագործել նաեւ մանրամասն տեղեկություններ ստանալու այդ աշխատանքների մասին: Ես ընդունել եմ մի շարք որոշումներ Թալիշի վերակառուցման եւ վերաբնակեցման ուղղությամբ: Մենք արդեն իսկ իրականացրել ենք մի շարք աշխատանքներ ու գործեր, որոշները նախապատրաստվում ենք իրականացնել ապագայում, ինչը հնարավորություն է տալու առաջիկայում ունենալ վերակենդանացած, վերակառուցված Թալիշ: Եվ այդ հանձնարարականների շրջանակում նախատեսել ենք, որ Թալիշում բնակվելու են ավելի շատ թալիշցիներ, քան բնակվում էին մինչ ապրիլյան իրադարձությունները:

– Իսկ ի՞նչ կատեք հանրաքվեի միջազգային արձագանքի մասին:

– Նախ՝ համաձայն չեն, որ միջազգային հանրությունը կոշտ գնահատականներ է տվել: Միջազգային հանրության այս կամ այն ներկայացուցիչները հանդես են եկել տարբեր հայտարարություններով: Տեսակետներ են հնչեցվել, որ մենք պետականաշինության զարգացման ուղղությամբ իրականացնում ենք մեր հերթական միջոցառումը, եւ այդ առումով այս միջոցառումը նրանք կատարելի ենք չենք անել: Եթե ուշադրություն եք դարձրել Միճակի խմբի համանախագահների հայտարարությանը, դրա մեջ այդ ամենը նշվել է:

Զրույցը գրի առավ ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԸ



ՍԱՅԱԿ ԶԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ. «Վերակազմավորումն ինքնանպատակ չէ, այլ պիտի նպաստի ոռոգման ջրի մատակարարման բարելավմանը»

Տարեվերջին մարզի հողա- փարածքների ոռոգման համակարգում կառուցվածքային փոփոխություն է տեսնել: Տարածաշրջանային չորս ջրօգտագործողների ընկերությունները միավորվել են, ստեղծվել է մարզային «Սյունիք» ջրօգտագործողների ընկերությունը: Նոր կառույցի մասին որոշ մանրամասներ իմանալու համար զրույց ունեցանք նրա նորանշանակ գործադիր տնօրեն Սահակ Զամբարձումյանի հետ:

– Պարոն Զամբարձումյան, որպես մեր զրույցի նախաբան, կուզենայի՞նք համառոտ ներկայացնել Ձեր կենսագրությունը:
– Ծնվել եմ 1956 թվականին Մեղրու Կալեր գյուղում, ավարտել եմ Մեղրու միջնակարգ դպրոցը, այնուհետև երևանի պետական սարահանի ֆիզիկայի ֆակուլտետը: Աշխատանքային գործունեությունը սկսել եմ Մեղրիում 1978 թվա-

կանին՝ «Ռեզիստոր» գործարանի Մեղրու արտադրամասում՝ նախ՝ ճարտարագետ-տեխնոլոգ, հետո արտադրամասի պետ: Այնուհետև աշխատել եմ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում՝ գլխավոր ճարտարագետ: 1991-1996 թվականներին եղել եմ Մեղրու քաղաքապետի նախագահ: Դրանից հետո երկու տարի զբաղվել եմ ձեռնարկատիրությամբ, հետո նշանակվել է լեզանցի հարավային մասնաշրջանի Մեղրու էլեկտրո էներգետիկայի գործադիր տնօրեն: Ամուսնացած եմ, ունեն երկու դուստր: 2003 թվականից եղել եմ ՀՀ Մեղրու կառույցի ղեկավարը, այժմ՝ Մեղրու խոշորագույն համայնքի ՀՀ կառույցի ղեկավարի տեղակալ:
– Ո՞րն էր մարզի ջրօգտագործողների ընկերությունների միավորման նպատակը:

– Առկա ռեսուրսները, ջրային պաշարներն ավելի արդյունավետ օգտագործելու համար, ինչպես նաև ջրօգտագործողների սպասարկումը բարձրացնելու նպատակով հանրապետության 37 ջրօգտագործողների ընկերությունները խումբ-խումբ միավորվել են, և այսօր կա 14 ջրօգտագործողների ընկերություն: Մեր մարզում ստեղծվել է «Սյունիք» ջրօգտագործողների ընկերություն: Վերակազմավորման գործընթացն ավարտին կհասցվի այս ամսվա վերջին, որից հետո իմ նստավայրը կլինի Կապանում (մեր զրույցը կայացել է Մեղրիում, ծանոթ. խմբ.):

– Որքա՞ն է նոր ստեղծված կառույցի աշխատակիցների թիվը, և արդյո՞ք նախկին տարածաշրջանային ջրօգտագործողների ընկերությունների վերակազմավորումով աշխատակիցների կրճատում է եղել, ինչը մոռացվել է և տարածված մեր օրերում:
– Նոր ձեռավորված կառույցի աշխատակիցների թիվը մոտ 120 է, և վերադասը, եւ մենք հակված ենք այն մտքին, որ քիչ աշխատողներ կրճատվեն: Մինչևեռ կրճատումներն անխուսափելի են, եթե նախկինում եղել է չորս ընկերություն, բնականաբար՝ չորս հաշվապահ, այժմ պիտի ունենանք մեկը: Բայց այն մասնագետները, ովքեր տարիներ շարունակ օգտակար են եղել համակարգին, ծառայել են ժողովրդին, նրանք պիտի մնան և աշխատեն: Բացի այդ մենք նպատակ ունենք չորս-վող հողերը ջրաբեր դարձնել, կարծում եմ մեր աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու դեպքում հնարավորություն կունենանք նոր աշխատողներ ներգրավել ընկերության մեջ:

– Քանի՞ հեկտար ոռոգելի հողատարածություն կա ձեր ընկերության տրամադրության տակ:
– Այսօրվա դրությամբ, նախկինում կնքված պայմանագրերի համաձայն, մենք ոռոգում ենք մոտ 1500 հեկտար, այս տարվանից, նորից եմ կրկնում, պիտի ոռոգելի հողատարածություններն ավելացնենք: Արդեն սկսել ենք ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքները: Ապրիլի 1-ից Մեղրիում սկսում ենք ոռոգման ջուր մատակարարել: Մեղրիում լավագույն տարբերակը ոռոգման ինքնահոս համակարգ ներդրել էր, որ անտիճանաբար իրականություն է դառնում: Ընդհանրապես Մեղրիում ոռոգման ջրի ինքնարժեքը բարձր էր, ինչը բացատրվում էր ոռոգումը

մեխանիկական եղանակով՝ պոմպերի միջոցով իրականացմամբ: Նոր ինքնահոս եղանակի ներդրմամբ եւ ֆինանսական տնտեսում կլինի, եւ ոռոգման ջրի մատակարարման որակը կբարելավվի:

– Ոռոգման ջրի հետ կապված հիմնախնդիրներ կան մարզի մյուս տարածաշրջաններում, մասնավորապես, Սիսիանում: Ջրի հսկայական կորուստներ կան Սպանդարյանի ջրանցքում:
– Որքանով տեղյակ եմ, այդտեղ մեծ ներդրումներ են անհրաժեշտ ջրանցքը նորոգելու համար, այդպիսի միջոցներ ներկայումս չկան, բայց հույս ունեմ, որ մասնակի նորոգումներով կարելի է ջրամատակարարումն ապահովել նախկինից ավելի լավ:

– Գորիսում էլ խնդիրներ կան ոռոգման համակարգում, մասնավորապես Գորիսի ցանցի վիճակը հեռու է բավարար լինելուց:
– Եղածին մեկն էլ է ավելացել, Քարահունցի հատվածում պայթել է ոռոգման ջրի խողովակը, «Քոնսոլր Ղլոբալ հիդրոկասակաթ» ՓԲԸ-ն վերականգնում է և հավաստիացնում, որ մինչև ոռոգման սեզոնի սկիզբը վթարը կվերացնեն: Ներքին ցանցն ինչպես Գորիսում, այնպես էլ Սիսիանում մաշված է, ջրի կորուստները՝ անխուսափելի: Պիտի ասեմ, որ ջրօգտագործողներն էլ մի քիչ սրտացավ պիտի լինեն, դժվարությամբ փականներ ենք հայթայթում, տեղադրում, բայց անփույթ օգտագործման հետևանքով շարքից դուրս են գալիս, եթե չստանանք, հենց ջրօգտագործողներն իրենք են ջարդում, որպեսզի մի քանի խորանարդ մետր ավելի ջուր վերցնեն: Պրոբլեմներ բոլոր տարածաշրջաններում կան, դրանք վերացնելու համար անմեծոյա քրտնաջան աշխատանք է անհրաժեշտ:

– Ձեզ հաջողություն ենք մաղթում նոր աշխատանքում:
– Ես էլ շնորհակալ եմ մեր կառույցով հետաքրքրվելու համար, մեր համագործակցությունը, կարծում եմ, ի նպաստ ջրօգտագործողների կլինի, եւ կառավարության որոշումներին, եւ մեր առջեւ դրված խնդիրներին իրազեկ պիտի լինեն ջրօգտագործողները, հանրությունը պիտի տեղյակ լինի, որ ոռոգման համակարգի վերակազմավորումն ինքնանպատակ չէ, այլ պիտի նպաստի ոռոգման ջրի մատակարարման բարելավմանը:

Ջրույցը՝ ԿԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ



Արթուր Կոստանյան ՋԱՊՀ Կապանի մասնաճյուղի տնօրեն

Ռոբերտ Էջանանցու անվան կրթաթոշակ՝ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին

«Վարպետաց դասեր» էջ 3 սեմինարների շարք անցկացնել՝ ամիսը մեկ անգամ պարբերականությամբ, որի ընթացքում մարզի տարբեր ոլորտների նշանավոր անձինք ոչ միայն մասնաճյուղի ուսանողության, այլև մարզի երիտասարդության համար տարբեր թեմաներով դասախոսություններ կկարդան: Նախաձեռնության մեկնարկը փետրվարի 21-ին ազդարարեց Սյունիքի մարզպետ Վահե Զակոբյանը՝ հանդես գալով «Սոցիալական իմաստներ» թեմայով դասախոսությամբ: Թեման արդիական էր և հետաքրքրեց ներկաներին, որոնց թվում էին ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի ուսանողներ, դասախոսներ, գիտական խորհրդի անդամներ, դպրոցի տնօրեններ, ուսուցիչներ, աշակերտներ, Գորիսի պետական համալսարանից երկրաչափագիտության ինչպես նաև՝ մարզպետարանի աշխատակիցներ: Ի դեպ, սեմինարին առցանց հետևում էին Գորիսի պետական համալսարանի, Հայաստանի ազգային ազդարարին համալսարանի Սիսիանի մասնաճյուղի ուսանողական, Ազարակի, Մեղրու թիվ 1 և Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոցների աշակերտական խմբերը:

Առաջիկա անվաններից խոսելիս Ա.Կոստանյանը տեղեկացրեց, որ հենակետային դպրոց ստեղծելու ուղղությամբ որոշ քայլեր են ձեռնարկվել, որը նախեստառաջ նպատակ ունի բնագիտամաթեմատիկական առարկաներից աշակերտների գիտելիքների որակը բարձրացնել՝ օգտագործելով նաև մասնաճյուղի դասախոսների ներուժը, լաբորատոր պայմանները և այլ հնարավորությունները:

Մասնաճյուղը երկու մասնագիտությամբ միջին մասնագիտական կրթություն իրականացնելու համար նախարարություն 30 անվճար տեղի հայտ է ներկայացրել: Համապատասխան աշխատանքներ են իրականացվում նաև մասնաճյուղում երկու մասնագիտությամբ՝ ընդերքաբանություն և մետալուրգիա, մագիստրոսական կրթություն իրականացնելու համար: Ամենայն հավանականությամբ ոչ այս, բայց հաջորդ ուստարում ծրագիրն իրականություն կդառնա:

«Ազարակի ՊՄԿ» ՓԲԸ նորանշանակ տնօրենի շրջայցը Մեղրի համայնքում

2017թ. փետրվարի 3-ից «Ազարակի պլանմանոլիթեմային կոմբինատ» ՓԲ ընկերությունը գլխավորեց տեխնիկական գիտությունների թեկնածու Անդրեյ Անատոլևիչ Սինյակովը: Մեղրի համայնքի ղեկավար Սիսիբար Զաքարյանի հետ ունեցած հանդիպումից հետո Ա.Սինյակովը ցանկություն է հայտնել ծանոթանալ ոչ միայն Ազարակ քաղաքին, այլև ողջ համայնքին, բնակչության առօրյա կյանքին, կրթամշակութային ենթակառուցվածքին: Նորանշանակ տնօրենի և համայնքի ղեկավարի աշխատանքային օրը սկսվեց Ազարակի միջնակարգ դպրոց կատարած այցով: Նրանք հանդիպում ունեցան ուսուցչական կազմի հետ,

շրջայց կատարեցին դպրոցում, շփվեցին երեխաների հետ: Ապա եղան «Ազարակի մանկապարտեզ» և «Ազարակի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ներում: Հանդիպումները բավականին անմիջական էին: Սիսիբար Զաքարյանը մեկ անգամ եւս կարելուրեց պլանմանոլիթեմային կոմբինատի դերը տարածաշրջանի զարգացման գործում. «Այն ոչ միայն մեր շրջանում լուծում է զբաղվածության զգալի խնդիր, այլև նրա շնորհիվ մենք ինժեներատեխնիկական մտքի պակաս չենք զգացել: Ես ողջունում եմ լավ կրթություն ստացած ու պատրաստված կարիերին և, երբ ծանոթացա Ա.Սինյակովի կենսագրությանը, աշխատանքային անցած ուղուն, հավատացի, որ ամեն ինչ դե-



պի դրական է զնայու, և մեր համագործակցության շրջանակն ավելի է ընդլայնվելու»: Հանդիպման ընթացքում Ա.Սինյակովը ներկայացրեց իր անցած աշխատանքային ուղին, ծավալած գործունեությունը, ոլորտում կարելուրեց երիտասարդ կարգերի ներգրավվածությունը և պատրաստակամությունը հայտնեց հնարավորինս աջակցել նրանց: Այցելության վերջին վայրն Ազարակի պատանի

ընթացակարգի մարզարահն էր: Մարզիկների մեծամարտ-պարապմունքը հիացրեց հանրագործների ղեկավարին:

Այցելությունները կշարունակվեն համայնքի այլ բնակավայրերում ևս: Երիտասարդ տնօրենը պատրաստակամություն հայտնեց սիրով մասնակցել համայնքային կյանքին, միջոցառումներին:

ԿՈՐՅՈՒՆ ԱՎԵՏԻԱՅԱՆ. «Սյունյաց աշխարհում ծառայելու ողջ ժամանակաընթացքում զգացել եմ զգում եմ սպայի ծառայության պարվաբեր լինելը...»

Եջ 2 րունցող ընտանիքը, որը, համոզված ենք, կոգեչնչի շատ երիտասարդ սպաների ու աղջիկների. չէ՞ որ ինչպես Կորյուն Ավետիսյանն է հավատացնում, կյանքը սկսվում է ամուսնությունից հետո:

Կորյուն Ավետիսյանը ծնվել է 1982թ. Գյումրիում: Ավարտելով Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոցը՝ 1999-2003թթ. սովորել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում: «Զինվորականի մասնագիտությունը ընտրելու հարցում մեծ է եղել բարեկամներիցս մեկի դերը, ով ծառայում էր ռուսական բանակում: Ծնողներս, հատկապես հայրս, դեմ էր իմ ընտրությանը, բայց օգտվելով նրա իմ ընդունելության ժամանակ ՌԴ-ում գտնվելու փաստից՝ դիմեցի ռազմական ինստիտուտ: Հսկիչ անցագրային կետից մայրելով ինստիտուտի շենքի մասացի, որ անպայման պետք է ընդունվեմ», – խոստովանում է Կ. Ավետիսյանը:

Ուսումն ավարտելուց հետո նրան ծառայության նշանակեցին Սեդրու գործառնատուն եւ, ինչպես խոստովանում է, սա միակ տարածաշրջանն էր, որտեղ ծառայելու մասին անգամ մտքով չէր անցնում: Ինչպես, 2003թ. ավարտելով ռազմական ինստիտուտը՝ ծակատազարի բերումով երեք ընկերներ գործուղվեցին Սեդրու: «Իհարկե, սկզբնական շրջանում որոշակի դժվարություններ կային, բայց դե յուրաքանչյուր մասնագիտություն իր դժվարություն ունի, որ պետք է հաղթահարել: Տեղի հրամանատարության շնորհիվ ծառայողական պարտականությունների կատարման ճիշտ ուղին բռնեցի շարժվելով առաջ», – նշում է երիտասարդ սպան եւ հավելում, որ Սեդրիում ծառայել է տասը տարի, որից հետո տեղափոխվել Սիսիանի գործառնատն՝ դիվիզիոնի շտաբի պետ, վեց ամիս առաջ նշանակվել դիվիզիոնի հրամանատար:

Առաջին արձակուրդի ժամանակ մեկնելով հայրենի քաղաք՝ մայրը «պարտադրեց» ամուսնանալ, «իսկ ես այդ հարցին բավականին անլուրջ էի վերաբերվում»: Բայց ճակատագրի բերումով այդ ընթացքում իրենց տան մոտ գտնվող ծերանոցում աշխատող մի աղջկա է նկատում, հավանում եւ սիրահարվում (հմբ.՝ կնոջ պատմածին հիացնումընքում ավելացնում է Կորյունը): «Երբ Գյումրու ավանդույթի համաձայն գնացինք խնամատիրության Ամալյայենց տուն, ես մեզ մերժեցին, օրինական կարգով փախցրի նրան (հմբ.՝ ծիծաղում է): Պետք է սրտիս ուզածով լինեմ: Հիմա հայտարարում եմ, որ անչափ երջանիկ եմ իմ ընտանիքում, հպարտ իմ ստեղծած ընտանիքով, ապագա զինվոր որդիներովս», – պատմում է Կորյունը:

Իսկ ի՞նչն էր Ամալյայի ծնողների անհամաձայնության պատճառը: «Ծնողներս դեմ էին իմ ընտրությանը՝ Կորյունի մասնագիտության պատճառով: Եղբայրներս էլ են զինվորականներ եւ հաշվի առնելով

նրանց աշխատանքային որոշ դժվարություններ՝ նրանք ուզում էին ինձ հեռու պահել դրանցից: Բայց կյանքն ապացուցեց, որ իմ ընտրությունը ճիշտ էր. նրանք զոհ են փեսայից», – ուրախությամբ նշում է կինը՝ Ամալյա Ավետիսյանը, ով խոստովանում է, որ այդքան էլ հեշտ չէ սպայի կին լինել, բայց եթե սիրում ու հարգում ես ամուսնուդ, բոլոր դժվարություններն էլ հաղթահարվում են: «Պետք է ընթերցումով մոտենալ նրանց մասնագիտությանը, համբերատար լինել, պատրաստ լինել, որ հաճախ օրերով, եթե պետք լինի, ամիսներով մենակ պետք է լինես, ամուր պահես ընտանիքը, որ սպայի թիկունքն է, իսկ եթե այն ամուր չեղավ, զինվորական պարտականությունները կատարելիս հաստատ թերացումներ կլինեն», – անկեղծանում է կինը, ով մասնագիտությամբ հաշվապահ է, բայց ներկայումս չի աշխատում, զբաղվում է ընտանեկան հոգսերով: «Աշխատելու մասին դեռես չեմ մտածում, քանի որ երեխաների խնամքին, կրթությանն ու դաստիարակությանն եմ նվիրում ողջ ժամանակս»:

«Սպան մեր զինված ուժերի ողնաշարն է, մեր պետության անվտանգության երաշխիքներից մեկը, ում հանդեպ ուշադիր վերաբերմունքն անընդհատ պետք է կատարելագործել: Նա իր առաջին քայլերի ընթացքում արդեն իսկ պետք է զգա ավագ սպաների հոգատարությունն ու աջակցությունը», – նշում է Սիսիանի գործառնատնի հրամանատար, գնդապետ Սմբատ Գրիգորյանը եւ հավելում, որ սպան ռուսումնական պարսպանություններից, առօրյա խորհրդակցություններից ընդունալ մինչեւ անձնական շփում օրինակ պետք է ծառայել երիտասարդ սպաների համար:

Ինչպես նշեց Կորյուն Ավետիսյանը, թե՛ պետության, թե՛ հրամանատարության, թե՛ հասարակության մակարդակով սպան մշտական ուշադրության կենտրոնում է: «Առհասարակ Սյունյաց աշխարհում ծառայելու ողջ ժամանակաընթացքում զգացել եմ զգում եմ սպայի ծառայության պատվաբեր լինելը, այստեղ սպան իր դիրքում է իր տեղում է: Ժողովուրդը գիտակցում է ազգին պիտանի, նրա անվտանգությունն ապահովող մարդու հարգն ու պատիվը: Իսկ այդ վերաբերմունքը ստիպում է առավել շատ գիտակցել աշխատանքիդ կարելությունը, պատասխանատվությանը վերաբերվել ստանձնած պաշտոնիդ», – նշում է երիտասարդ մայրը:

Աշխատավարձի առումով նույնպես չի դժգոհում, քանի որ հաշվի առնելով մեր երկրի ընդհանուր վիճակը, նա ստանում է այնքան աշխատավարձ, որ բավարար է միջին մակարդակով ապրելու համար: «Բնական է, ինչքան աշխատավարձը բարձր է լինում, այնքան պահանջներդ ավելանում են, բայց, իմ կարծիքով, ներկայումս մեր ստացած աշխատավարձը բավարար է ընտանիքի հմարավորինս բարե-

կեցիկ պայմաններով ապահովելու համար: Չեն ասում շքեղության մեջ ենք ապրում, բայց մեզ կարող են դասել հասարակության միջին խալի շարքերը: Մարդ պետք է ուրախ լինի, որ իր բաժակը կիսով չափ լիքն է, եւ ոչ թե տխրի, որ կիսով չափ դատարկ է»:

Ծառայողական խնդիրներից զատ՝ սպաների համար երեկի թե ամենադժվարին խնդիրներից է ծննդավայրից հեռու գտնվելը, տարբեր բնակավայրերում ծառայելը: «Կոնկրետ Սիսիանում, արտագաղթով պայմանավորված, վարձակալության համար ազատ բնակարաններ շատ կան: Պետությունը բնակավարձի համար տրամադրում է որոշակի գումար՝ հաշվի առնելով ընտանեկան կարգավիճակը, երեխաների քանակը: Հուսով եմ կզա ժամանակ, եւ զորամասերին կից կլինի բնակարանային ֆոնդ՝ սպաների ընտանիքների համար», – նշեց զորամասի հրամանատարը եւ հավելեց, որ կարելու է նաեւ սպաների կանանց զբաղվածության հարցը, հնարավորության սահմաններում աշխատանքի տեղավորում: Ընթացիկ հարցեր նույնպես առաջանում են, որոնց զորամասի հրամանատարությունը ձգտում է լուծում տալ: Բայց այդ ամենով հանդերձ՝ զնդապետը նշեց, որ սպայի համար կարելու է ընտանեկան ներդրանքներ կատարել, որի պահպանման հիմնական բեռը կնոջ ուսերին է: «Չորամասային հաջողությունների, մարտունակության եւ ընդհանրապես ծառայողական խնդիրների լուծման հարցում սպայի ընտանիքն ունի առանցքային դեր, եւ մենք պետք է ուշադրության կենտրոնում պահենք նրանց, խորհուրդ տանք, աջակցենք ընտանիքի կայացմանը մեր «լիազորությունների» սահմաններում», – նշում է հրամանատարը:

«Պետք է վախենալ սպայի կին լինելուց, դա տխուր է, մենք էլ հպարտանում ենք մեր կանանցով, որովհետեւ մեզ հետ տանում են ամեն դժվարություն: Այն հայուհին, ով որոշում է դառնալ սպայի կին, ուրեմն ինքն արդեն իսկ համարձակ է եւ պատրաստ պետք է լինի տարատեսակ դժվարություններ հաղթահարել», – խորհուրդ է տալիս Կորյուն Ավետիսյանը:

Մարտական զանազան պարտականություններով ծանրաբեռնվելը չի խանգարում ընտանիքին նույնպես ժամանակ տրամադրել: Ինչպես խոստովանում է Ամալյան. «Ամուսինս քերմությամբ ու հոգատարությամբ է մեզ շրջապատել, ինչը թույլ է տալիս մենակություն զգալ նրա բացակայության ընթացքում անգամ: Հասցնում է իմ, երեխաների հետ ժամանակ անցկացնել, զբաղվել նրանց կրթությամբ, դաստիարակությամբ»: Երկու որդուց՝ 10-ամյա Գուռից եւ 9-ամյա Թաթուլից, ավագը նույնպես ցանկանում է հոր մասնագիտությունն ընտրել: Հարցին, թե արդյո՞ք Ամալյան դեմ չէ դրան, պատասխանեց. «Հայրիկին տեսնելով ուզում է ընդօրինակել նրան, դեմ



Ավետիսյանների որդիները՝ Թաթուլը և Գուռը

չեմ, թող հոր ճանապարհով գնա, բայց միայն թե խաղաղություն լինի մեր երկրում»:

Ապրիլյան պատերազմի օրերին, բնակամասքար, բոլորն էին անհանգստանում, ցավով հետեւում զարգացող իրադարձություններին, «բայց այսօր այդ ամենն անցյալում է եւ տա Աստված, որ այլես չկրկնվի: Չնայած ամուսնուս համարձակությունը հաշվի առնելով՝ համոզված էի, որ մարտական առաջադրանքները հաջողությամբ կկատարի»:

Կ. Ավետիսյանը գիտելիքների, հմտությունների կատարելագործման համար նպատակ ունի կրթությունը շարունակել Ռուսաստանի Դաշնության իրետաճային ակադեմիայում: «Կրթության վայրը կարելու է գիտելիքների ձեռքբերման համար, կարելու է սովորողի ձգտումն է, նպատակասլացությունը», – նշում է նա եւ հավելում, որ մասնագիտական ունակությունները հնարավոր է զարգացնել նաեւ ինքնուսուցմամբ, ինչի համար համապատասխան գրականություն կա, պարզապես պետք է ժամանակ տրամադրել, ցանկություն ունենալ:

Զինվորական ծառայության ընթացքում շատ կարելու է նաեւ հրամանատարի կերպարը: «Մեր հրամանատարից՝ գնդապետ Սմբատ Գրիգորյանից, կարելի է անվերջ սովորել: Գոհ եմ, որ ինձ բախտ է վիճակվել ծառայել նրա նման մարդու, ռազմական գիտելիքներ ու հմտություններ ունեցող զինվորականի հետ»:

Իր սպային այսպես բնութագրեց հրամանատարը: «Մեր հիմնական հարվածային ուժի հրամանատար, մայրը Ավետիսյանը հայրենասեր է, նախաձեռնող, աշխույժ, գրագետ ու համարձակ, ում տեսնում եմ ապագա գեներալների շարքում: Իմ աչքի առաջ ունեն սպաներ, ովքեր ապագայում բարձունքների կիսանն, պարզապես կայացման ճանապարհ պետք է անցնեն, անընդհատ կատարելագործվեն, հղկվեն: Հատկապես նրանց հանդեպ անհատական, տարբերակված մոտեցում պետք է ցուցաբերվի»:

Ի դեպ, սպայի համարձակության վերաբերյալ իր ուրույն տեսա-

կետն ունի նաեւ մեր հերոսը. «Զինվորական ծառայության ժամանակ եթե չունեցար համարձակություն, ապա որոշում կայացնելու համար դժվարությունների առաջ կկանգնես: Պետք է կարողանաս որոշումը կայացնել եւ տեր կանգնել դրան, գիտակցել դրա հետեւանքները, որ հաջողության հասնելիս հարգ վայելես, ստանուլ տալիս՝ պատասխան տաս»:

Հրաշքով նորից ծնվելու դեպքում միզուցեւ կրկին զինվորականի մասնագիտությունն ընտրել չուկելու համար այն թերություններն ու բացթողումները, որոնք մինչ այժմ թույլ է տվել, ինչը կնպաստեր աշխատանքում ավելի կատարելագործվելուն: Երազանքներ, բնականաբար, շատ ունեն, հատկապես կապված երեխաների ապագայի հետ: Բայց նրանց համար ամենամեծ դժվարությունը ծննդավայրից հեռու գտնվելն է, չնայած տասը տարուց ավելի է՝ Սյունիքի մարզում են, միեւնոյն է, իրենց ինչպես ձուլել ջրում չեն զգում: Թերես ու պատճառներից մեկը, որ արձակուրդ ստանալու առաջին իսկ ժամերին մեկնում են Գյումրի:

Հատկապես բարձրասարանցի տղաներին երիտասարդ սպան խորհուրդ է տալիս չխուսափել զինվորական ծառայությունից, երբեմն չթերագնահատել մեր բանակի ուժն ու հնարավորությունները, իսկ եթե կորոշեն հետագայում ընտրել այդ մասնագիտությունը, լինեն համարձակ, քաջ ու հայրենասեր:

«Անկախ ամեն ինչից, թե ով կլինի սպան, ինչ ունակություններ, գիտելիքներ ու հմտություններ կունենա, եթե ընտանիքը կայացած չէրավ, այդ սպան չի կարողանա արդարացնել իրեն ծառայության մեջ: Երեխաների դաստիարակության, ուսուցման եւ ընտանիքի կայացման համար կինն է հիմնական պատասխանատվությունը կրում, եթե կինը կարողացավ պատվով կատարել դա, սպայի թիկունքն ապահով կլինի եւ ծառայության ընթացքում ավելի մեծ հաջողություններ կգրանցի: Ինչպես ասում են, мой дом-моя крепость», – անփոփեց զրույցը մայրը Կորյուն Ավետիսյանը:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գայանե Բաղդասարյանը 60 տարեկան է

Ասում են՝ մարդու իսկական կյանքը սկսվում է հիսուն տարեկանից հետո: Այդ տարիներին մարդը փորձաքննում է այն ամենին, ինչի վրա խառնվում են ճշմարիտ նվաճումները, ձեռք է բերում այն, ինչ կարելի է փայլ ուրիշներին, ճանաչում այն, ինչ կարելի է սովորեցնել, հարթում այն, ինչի վրա կարելի է կառուցել:



հատվածներ (նախընտրում է Համո Սահյան, Վահան Տերյան, Պարույր Սեւակ): Շատ ընթերցասեր է, անգամ այս տարիքում սիրում է սովորել, ինչպես ինքն է ասում, «Եթե ես մի բան չեմ իմանում, ամոթ չէ հարցնելը»: Չանազան բաների, օտարաբանությունների բացատրություն, բուսաբանության անուններ չիմանալիս դիմում ենք նրա օգնությանը: Գայանեին ճանաչողները կփաստեն, որ որեւէ պատմություն առավել հետաքրքիր է դառնում, երբ ինքն է դա ներկայացնում՝ պատկերավոր եւ մանրամասն:

Եթե որպես իրականություն ընդունենք «Կյանքը քիչ բան կարող է սովորեցնել նրան, ով չի սովորել դժվարություններ տանել» ասույթը, ապա մեր սիրելի Գայանեի համար պետք է ասենք, որ այդ դժվարությունները նրան չեն հուսահատեցրել. վավատեսություն նրանից միշտ կարելի է ակնկալել:

Բոլոր տատիկ-պապիկներն են խոստովանում, որ թռան ծննդյան հետ նրանց կյանքն այլ երանգ է ստանում: Իսկապես, սիրելի թռուռուհին՝ Էվան, մոր շունչ ու իմաստ է հաղորդել նրա կյանքին, ում արարքների մասին հիացմունքով է պատմում, հաճույքով տանում նրա կամակորությունները:

Չնայած հարազատներից շատերն օտար ավերում են, բայց հարազատ քաղաքում նույնպես կան բարեկամներ, ընկերներ, ովքեր մշտապես շրջապատում են նրան, կիսում վիշտ ու ուրախություն:

Թերթի խմբագրակազմը շնորհավորում է, ինչպես խմբագիր Սամվել Ալեքսանյանն է բնութագրել, «Այունյաց երկիր» սյունիցից մեկին՝ Գայանե Բաղդասարյանին, հրեյալի առթիվ, մաղթում առողջություն, հաջողություն, նվիրական երազանքների իրականացում:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



«Հուստ երիցուկ»

Գեղեցիկների մարզկենտրոնում քննարկվան անվամբ նոր հասարակական կազմակերպություն է ստեղծվել՝ «Հուստ երիցուկ»:

Ուշագրավ է, որ նրա նախաձեռնած ու անցկացրած անդրահիկ միջոցառումը նվիրված էր բանակին՝ ավելի ստույգ՝ ՀՀ զինված ուժերի կազմավորման 25-րդ տարեդարծին: Կապանի N1 հիմնական դպրոցի հետ, Կապանի N գործառնասուն գինվորների առօրյան հետաքրքրական դարձնելու նպատակով, կազմակերպվեց ինտելեկտուալ խաղ-մրցույթ: Խաղ-մրցույթի հարցաշարում ընդգրկված հարցերն առնչվում էին հայոց եւ համաշխարհային պատմությանը, բանակաշի-

նությանը: Միջոցառման մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին զոհված քաջորդիների հիշատակը: Բանակի օրվա առթիվ զորամասի սպաներին եւ զինվորներին բարեմաղթանքի խոսքեր հղեցին «Հուստ երիցուկ» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Գրիգորի Հարությունյանը, Կապանի N1 հիմնական դպրոցի փոխտնօրեն Արշակ Սարգսյանը: Նրանց ելույթների լեյտմոտիվն այն էր, որ մեր մարտական բանակն ի զորու է պաշտպանել Հայաստանն ու հայ ժողովրդին՝ ապահովելով նաեւ տարածաշրջանային կայունություն ու անվտանգություն:

Ձինվորներին երաժշտական ողջույններ հղեց թիվ 1 հիմնական դպրոցի երգչախումբը (գեղարվեստական ղեկավար՝ Սիլվա Նավասարդյան): Միջոցառման ավարտին թե՛ զինվորները, թե՛ հասարակական կազմակերպության անդամները գոհ հեռացան դահլիճից:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Մեղրի համայնքը՝ սեփական եկամուտների աճի գոհացնող փոփոխություններով եւ իրարեւանական ծրագրերով

Սույն թվականի փետրվարի 22-ին վարչապետ Կ. Կարապետյանն ընդունել է փոփոխությունների 12 համայնքների ղեկավարների, որոնք 2016 թվականին ապահովել են համայնքների սեփական եկամուտների աճ եւ նույնը նախատեսել են նաեւ 2017 թվականին:



ընտրված համայնքների մեծ է նաեւ Մեղրի խոշորացված համայնքը, որի զարգացման ծրագրի նկատմամբ եղել է վստահություն եւ սեփական եկամուտներում աճի գոհացնող տեմպեր: Մեղրի համայնքի ղեկավար Մխիթար Չաքարյանը վարչապետին է ներկայացրել ենթակառուցվածքների բարելավման, էներգախնայող լուսավորության, էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման, գյուղմթերքի վե-

րամշակման, վառարանների արտադրության, անասնապահության զարգացման կոնկրետ ծրագրեր, որոնք ուղղված են աշխատատեղերի ստեղծմանը եւ համայնքին

կարող են ապահովել տնտեսական արդյունք: megghri.am 23 փետրվարի 2017թ.

Հարգանքի տուրք հայրենիքի համար զոհվածների հիշատակին

Գարբաս համայնքի սիրելի՛ հայրենակիցներ

Գարբասի համայնքապետարանը եւ ավագանին նախաձեռնել են Արցախյան ազատամարտում զոհված ազատամարտիկների հիշատակին 2017թվականին կառուցել խաչքար-հուշարձան: Խնդրում ենք արտերկրում եւ հանրապետության բոլոր բնակավայրերում գտնվող մեր հայրենակիցներին՝ իրենց մասնակցությունը բերել խաչքարի կառուցման գործին նվիրված հանգանակությանը:

Ցանկացողները կարող են օգտվել «Գարբաս-Ըղվերծ» հայրենակցական հասարակական կազմակերպության բանկային հաշվեհամարից:

Սիսիան ՎՏԲ բանկ. ՀՀ դրամով՝ 16031030243700, ԱՄՆ դոլարով՝ 16031030243701, ՌԴ ռուբլիով՝ 16031030243703, Եվրոյով՝ 16031030243702:

Տեղեկությունների համար զանգահարել 094-99-62-61, 091-99-62-61, 094-34-34-76 հեռախոսահամարներով կամ գրել darbas.syuniq@mta.gov.am, sasha.stepanyan81@mail.ru էլեկտրոնային հասցեներով:

Եկեք համախմբվենք եւ հարգենք հանուն հայրենիքի զոհվածների հիշատակը:

Հարգանքներով՝ Ս. Ստեփանյան Գարբաս համայնքի ղեկավար

«Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ն աշխատանքի է հրավիրում ատաղձագործների, քար փորագրողների, դերձակների, ֆիզիկայի եւ աշխարհագրության դասախոսների, ովքեր ունեն համապատասխան բարձրագույն կրթություն՝ արտադրության վարպետի եւ դասախոսի թափուր պաշտոնի համար: Հետաքրքրված անձինք կարող են ուղարկել CV gorisstatecollege@mail.ru էլ. հասցեին կամ այցելել ք. Գորիս, Հայկազու-նիների 4:

«Հայ մամուլի» կանաչ կրակներում հեռախոսի հաշիվների լիցքավորումն՝ առանց հավելավճարի

Վերջերս շուկայում տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում շատ տեղերում սկսել են գանձել հավելավճարներ հեռախոսի լիցքավորումներից, ինչը բավականին դժգոհություններ է առաջացրել քաղաքացիների մոտ: «Պրեսս-Ստեյթ» ՄՊԸ-ն՝ հավատարիմ մնալով իր մշտական քաղաքակա-նությանը, չի փոփոխել իր աշխատանքային սկզբունքները եւ լրացուցիչ հավելավճարներ չի գանձում իր հաճախորդներից: Մոտեցեք ցանկացած մեր կրպակի եւ լիցքավորեք Ձեր հեռախոսի հաշիվն առանց որեւէ հավելավճարի:

Այունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՍ ԱՆԵՍԱՐԿ» ՍԱՀՄԱՆԱԾԱԿ ՊՐԱՏԱՆԱՏՎՈՒԹՅԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝ ՍՍՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32: Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47: Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր փճակով (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶՐ - ՇԱՆՈՒՅՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

ՌՆԶՄԻ թակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ ՕԻՄ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական օջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրմանը՝ 1730, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 23.02.2017թ.: